



## Պարույր Սևակ

Մեկի կողմից երկու կատակերո՞գ երեք աղջկա վրա

Ծերանում ենք, Պարույր Սևակ,

Ծերանում ենք, սիրելիս...

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Երեք աղջիկ քայլ են քայլում փողոցով:

Երեք աղջիկ փայլ են փայլում փողոցով:

Քայլո՛ւմ-փայլո՛ւմ, չե՛ն էլ նայում ոչ մեկին,

Բայց և այնպես տեսնում են պարզ ու մեկին,

Որ բոլո՛րն են իրենց նայում դողոցով:

Երեք աղջիկ ծիծաղում են անատիթ

Ու թվում են... ու թվում են անատիկ:

Տեսնես՝ ո՞վ է նրանց անուն հորինել:

Երկուսինը՝ ի՛նչ ուզում էր թող լիներ,

Միայն մեկին... մեկին լիներ Քնարի՛կ:

Երեք աղջիկ դաս են սերտում մեկուսի:

Տեսնես՝ ո՞վ է փարվում նրանց մերկ ուսին:

Մեկին ինչ-որ մեկը սիրեր, մինչդեռ ես,

Ես սիրեի գոնե... գոնե երկուսին:

Երեք աղջիկ գուցե ասեն ինձ «քեռի»՝

Նայելով իմ ճերմակացող քունքերին:

Իսկ ես ինչպե՞ս իմ հայացքով չգրեմ

Բիբերի մեջ նրանց ծիծղուն աչքերի.

«Մեկիդ մերժման ցավը մի կերպ կկրեմ,  
Իսկ երկուսի՛դ, գեթ երկուսի՛դ... կսիրե՛մ»:

2

Նրանք՝ դալար, իսկ ես՝ ահա ա՛յս տարիքին:

Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.

Մեկին՝ ի՛նձ պես,

Մյուսին՝ ի՛նձ պես,

Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ իրար բնա՛վ չեն ճանաչում,

Ես դրանից, անկեղծ ասած, չե՛մ ամաչում,

Որովհետև ես չեմ խաբում և ո՛չ մեկին.

Ինձ՝ երեքը, իսկ ես սիրում եմ երեքին՝

Մեկին՝ ի՛նձ պես,

Մյուսին՝ ինձ պես,

Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ երջանիկ են, ես՝ առավե՛ր:

Ո՛չ մի անգամ ո՛չ մեկն ինձնից չի՛ խոսվել,

Տառապանքից չի՛ պատավել

Ու կարոտից չի՛ խորովվել,

Որովհետև նույնիսկ հիմա՛ այս տարիքին,

Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.

Մեկին՝ ինձ պես,

Մյուսին՝ ինձ պես,

Ու երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ թե հանդիպեն մի օր իրար,

Պիտի խոսե՛ն-խոսե՛ն իրենց սիրուց իրավ,

Ու չիմանան, որ սիրում են մեկին՝

Նրա՛ն,

Ով սիրել է իրենց մեկտեղ.

Մեկին՝ ինձ պես,

Մեկին՝ ինձ պես,  
Իսկ երրորդին էլ՝ ինձ նման...

03.XI.1963թ.

Երևան